

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒՉԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստորոմա, ՌԴ**)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ՉԱՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)
Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեն ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)
Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)
Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Զամբուրգ, Գերմանիա**)
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎԱՆԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ղոնի Ռոստով, ՌԴ**)
Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN**, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain**)

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia**)

Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine**)

Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (**Minsk, Belarus**)

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (**Moscow, Russia**)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany**)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (**Rostov-on-Don, Russia**)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor

Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor

Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (**Geneva, Switzerland**)

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (**Olsztyn, Poland**)

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Авetik АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Արմեն Մարուքյան. Սևրի պայմանագիրը որպես պահանջատիրության իրավաբանական հիմքերից մեկը.....9

Armen Marukyan. Treaty of Sevres as One of the Legal-Political Basis of Reparations

Армен Марукян. Севрский договор как одна из правовых и политических основ репараций

Սարգիս Բաղդարյան. Միջերկրածովյան առևտուրն ու Հայրապետ Դի Մարտինի նամակները (նախնական դիտարկումներ)25

Sargis Baldaryan. Mediterranean Trade and Hierapet Di Martin’s Letters (Preliminary Remarks)

Саркис Балдарян. Торговля Средиземноморья и письма Айрапета Ди Мартина (предварительные замечания)

Անի Խաչատրյան. Թեթեյան մշակութային միության ԱՄՆ-ի և Կանադայի մասնաճյուղերի գործունեությունը 1980-ական թվականներին.....32

Ani Khachatryan. Activities of Branches of the Tekeyan Cultural Association in the United States and Canada in the 1980s.

Ани Хачатрян. Деятельность филиалов Культурной Ассоциации Текеян в США и в Канаде в 1980-х гг.

Միքայել Մալխասյան. Մեծ Հայքի թագավորության՝ Մոսքիկյան լեռներով ձգվող հյուսիսարևմտյան սահմանագծի խնդիրը (ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության»).....40

Mikayel Malkhasyan. The Problem of the North-Western Borderline of Greater Armenia along Moschikian Mountains (According to Claudius Ptolemy’s “Geography”)

Микаэл Малхасян. Проблема северо-западной пограничной линии Великой Армении вдоль Мосхикских Гор (по «Географии» Клавдия Птолемея)

Վահե Սարգսյան. Չավախքի հիմնահարցը վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ (ըստ 1999-2009 թթ. վրացական տպագիր մամուլի նյութերի) (Մաս 1).....54

Vahe Sarkisyan. The Main Issue of Javakhk according to the Perceptions of Georgian Socio-Political Thought (Based on Georgian Print Media in 1999-2009) (Part 1)

Ваз Саркисян. Проблема Джавахка в оценке грузинской общественно-политической мысли (по материалам грузинских печатных изданий 1999-2009 гг.) (Часть 1)

Արեգ Զոչինյան. Տերմինուս ընտրախավերի տեսությունը ամերիկյան անցումային պատմակարգի համատեքստում.....70

Areg Kochinyan. Terminus Elite Theory in the Context of American Transition Formation

Арег Кочинян. Теория элит Терминус в контексте американской переходной формации

**ԲԱՂԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

Մագդա Արսենյան. ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները նեոքաղաքականության պայմաններում.....82

Magda Arsenyan. The Issues of Democratization of Parliamentary Culture of the Republic of Armenia in the Context of Neopolitics

Магда Арсенян. Проблемы демократизации парламентской культуры в контексте неополитики в РА



ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՅԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՂԱԲԱԿԱՆ ՀԻՄՆԵՐԻՑ ՍԵՎԸ*

ՉՏԴ 941(479.25)

ԱՐՄԵՆ ՍԱՐՈՒԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայկական հարցի և հայոց
ցեղասպանության պատմության բաժնի վարիչ,
ԵՊՀ և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի պրոֆեսոր,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mararmts@yahoo.com

Հոդվածի նպատակն է հիմնավորել այն մոտեցումը, որ Հայաստանին անմիջականորեն վերաբերող 88-93-րդ հոդվածներից բացի, որոնցով վերականգնվում էր տեղաբնիկ հայ ժողովրդի իրավունքն իր հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի մի մասի նկատմամբ, Սևրի պայմանագրում տեղ են գտել օսմանահպատակ հայ բնակչության խախտված իրավունքների վերականգնման ու հասցված նյութական վնասների հատուցման, ինչպես նաև մարդկության դեմ կատարած հանցագործությունների, առաջին հերթին՝ հայերի պանզավածային բնաջնջումը ծրագրելու և իրագործելու համար թուրք բարձրաստիճան ու տեղական պաշտոնյաների նկատմամբ քրեական պատասխանատվություն նախատեսող ոչ պակաս կարևոր հոդվածները:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (ձևական-տրամաբանական, համեմատական) մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Սևրի պայմանագիրը թեև չի վավերացվել, սակայն դրա որոշ դրույթներ մասակիորեն գործադրվել են այն ստորագրող պետությունների կողմից, և որ տվյալ պայմանագիրը Լոզանի պայմանագրով չի փոխարինվել, քանի որ երկու փաստաթղթերի կողմերը, ինչպես նաև դրանց առարկան նույնական չեն:

Հիմնաբառեր՝ Սևրի պայմանագիր, Հայաստանի Հանրապետություն, Արևմտյան Հայաստան, հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, «Լբյալ գույքի մասին» ժամանակավոր օրենք, Թուրքիայի Հանրապետություն, խառը միջնորդ հանձնաժողովներ, Լոզանի պայմանագիր:

Ներածություն

Գերմանիայի հետ Վերսալի, Ավստրիայի հետ Սեն-ժերմենի, Հունգարիայի հետ Տրիանոնի և Բուլղարիայի հետ Նեյի պայմանագրերի ստորագրումից հետո Օսմանյան կայսրության հետ կնքված Սևրի պայմանագրով եզրափակվեց Առաջին աշխարհամար-

* Հոդվածը ներկայացվել է 28.08.2020թ., գրախոսվել՝ 07.09.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:

տում հաղթանակած ու պարտված տերությունների միջև կնքված պայմանագրերի շարքը:

1920թ.-ի օգոստոսի 10-ին Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան ու Ճապոնիան՝ որպես գլխավոր դաշնակից տերություններ, և Հայաստանը, Բելգիան, Հունաստանը, Ղեջասը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա - խորվաթա - Սլովենական պետությունը և Չեխոսլովակիան որպես դաշնակից պետություններ մի կողմից և համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրությունը՝ մյուս կողմից, ստորագրեցին 13 մասից և 433 հոդվածներից բաղկացած Սևրի հաշտության պայմանագիրը:

Հայ պատմագիտական միտքը տասնամյակներ շարունակ Սևրի պայմանագիրը գերազանցապես քննարկել է Հայաստանին ուղղակիորեն վերաբերող 88-93-րդ հոդվածների շրջանակներում¹, ինչը բնական պետք է համարել, քանզի դրանցով վերականգնվում էր հայ ժողովրդի իրավունքն իր հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի մի մասի նկատմամբ:

Պայմանագրի 88-րդ հոդվածով Թուրքիան Հայաստանը ճանաչում էր որպես ազատ ու անկախ պետություն, ինչն արդեն արել էին* դաշնակից պետությունները²: Հոդվածի վերջին ձևակերպմամբ փաստորեն արձանագրվում էր, որ պատերազմում պարտված թուրքական պետությունից բացի, Հայաստանի անկախ պետականությունն արդեն իսկ ճանաչված է Սևրի պայմանագիրը ստորագրող, հաղթանակած տասներկու պետությունների կողմից:

89-րդ հոդվածով Թուրքիան ու Հայաստանը, ինչպես և մյուս Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում էին ԱՄՆ-ին թողնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի նահանգներում Թուրքիայի ու Հայաստանի միջև սահմանը որոշելու հարցը և ընդունել նրա կայացրած որոշումը, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնք նա կարող է սահմանել ինչպես Հայաստանին դեպի ծով ելք ապահովելու, այնպես էլ հիշյալ սահմանագծին հարող թուրքական բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ³: Հատկանշական է, որ Հայաստանին դեպի Սև ծով ելք ապահովելուց բացի, տվյալ հոդվածով նախատեսվում էր նաև Հայաստանին փոխանցվելիք Արևմտյան Հայաստանի տարածքներիև հարող թուրքական իշխանության տակ մնացած

¹ Տե՛ս Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Ե., ԵՊՀ հրատ., 1989, Ահարոնեան Ա., Սարդարապատից մինչև Սեւր եւ Լոզան, (Զաղաքական օրագիր), Հ. Յ. Դ. Ամերիկայի կեդր. Կոմիտե, Պոսթըն, 1943; Ղորղանեան Գ., Հայաստանի հանրապետությունը եւ պետութիւնները Սեւրից Լոզան», Փարիզ, 1934; Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), խմբ. Չ. Կիրակոսյան, Ե., 1972; Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), Центр русско-армянских инициатив, Е., 1995; Հարությունյան Ա., Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, «Գիտություն» հրատ., 2004; Կարապետյան Հ., Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում, Ե., 2004; Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Ե., 2007, Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Ե., «Ատոդիկ» հրատ., 2012, Ղազարյան Հ., Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, Ե., «Էդիտ պրինտ», 2012 և ուրիշներ:

* Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչումն ըստ եւրոպայի կատարվել էր 1919թ.-ի փետրվար-մարտին, երբ Ավետիս Ահարոնյանի գլխավորած Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը հաղթանակած պետությունների շարքում թույլ տրվեց մասնակցել Փարիզի խաղաղության վեհաժողովի աշխատանքներին:

² Տե՛ս Հայաստանը... փաստաթղթերում, էջ 676:

³ Տե՛ս նույն տեղում:

տարածքների ապառազմականացումը: Պայմանագրի տեքստում տվյալ դրույթի ներառումը առավել քան կարևոր էր, քանի որ Թուրքիայում բեմալական շարժման ակտիվացումն ուղղակի ապառնալիք էր հայկական պետության գոյության համար:

Պայմանագրի 90-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ սահմանվում էր, որ Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների չափին և դրանց բնույթին վերաբերող պայմանագրի այն դրույթները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տարածքների հանդեպ, կգործադրվեն նաև Հայաստանին փոխանցվող տարածքների նկատմամբ՝ վկայակոչելով պայմանագրի VIII մասի (Ֆինանսական դրույթներ) 241-244-րդ^{**} հոդվածները⁴: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի Երզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգների և Տրապիզոնի նահանգի 1/3-ի փոխանցումը Հայաստանի Հանրապետությանն արդեն իսկ վճռված հարց համարելով՝ պայմանագիրը ստորագրող հաղթանակած պետությունները այդ տարածքների մասով Օսմանյան կայսրության նախկին պարտավորությունների կատարումը, ինչպես նաև իրավունքների հետ կապված հարցերը փոխանցում էին Հայաստանի Հանրապետությանը:

Պայմանագրի 91-րդ հոդվածի համաձայն՝ Արևմտյան Հայաստանի նշված նահանգների տարածքների որևէ մասի Հայաստանին փոխանցելու որոշման ընդունումից եռամսյա ժամկետում պետք է ձևավորվեր Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագիծը տեղում անցկացնող Սահմանային հանձնաժողով⁵: Սակայն քանի որ Սևրի պայմանագիրը հետագայում ուժի մեջ չմտավ, ապա նման հանձնաժողով չձևավորվեց և սահմանի գծանշման աշխատանքներ այդպես էլ չկատարվեցին:

Փաստաթղթի 93-րդ հոդվածով էլ Հայաստանը պարտավորվում էր պաշտպանել հիմնական ազգաբնակչությունից ռասայի, լեզվի ու կրոնի առումով տարբերվող բնակիչների շահերը, ինչը նախատեսվում էր ամրագրել նաև Հայաստանի և գլխավոր տերությունների միջև կնքվելիք պայմանագրերում⁶: Այս հոդվածով Հայաստանի վրա պարտավորություն էր դրվում առաջին հերթին պաշտպանել Երզրումի, Վանի, Բիթլիսի նահանգների և Տրապիզոնի նահանգի՝ իրեն միացվելիք տարածքներում բնակվող մահմեդական բնակչության՝ թուրքերի, քրդերի, ինչպես նաև թուրքական իշխանությունների կողմից Բալկաններից ու Հյուսիսային Կովկասից այդ տարածքներում վերաբնակեցված մուսուլման ժողովուրդների անվտանգությունը: Քաջատեղյակ լինելով, որ պատերազմի տարիներին այդ տարածքներում բնակվող մահմեդականներն ակտիվ մասնակցություն են ունեցել հայերի զանգվածային բնաջնջման գործում, դաշնակից տերությունները սույն հոդվածով Հայաստանի իշխանությունների վրա պարտավորություն էին դնում՝ կանխել ու բացառել նրանց նկատմամբ վերապրողների ու զոհերի ծառանգների կողմից վրեժխնդրության հնարավոր դրսևորումները:

Պայմանագրի 92-րդ հոդվածի համաձայն՝ Ադրբեջանի ու Վրաստանի հետ Հայաստանի սահմանների հարցը պետք է որոշվեր շահագրգիռ պետությունների ընդհանուր համաձայնությամբ, իսկ եթե նրանց չհաջողվեր համաձայնության գալ, ապա հարցը պետք է որոշվեր գլխավոր դաշնակից տերությունները, որոնք պետք է հոգ տանեին այդ երկրների միջև սահմանագատումը տեղում գծանշելու մասին⁷: Հաշվի առնելով, որ Ադրբեջանը հավակնություններ ուներ Արցախի, Չանգեզուրի ու Նախիջևանի հանդեպ, որոնք որակվում էին որպես վիճելի տարածքներ, իսկ Վրաստանը՝ Լոռիի նկատմամբ, որը «չեզոք գոտու» կարգավիճակ էր ստացել, ապա

^{**} Հիշյալ հոդվածները վերաբերում էին նախկին Օսմանյան կայսրության պարտքի մարման ժամանակացույցին և մեխանիզմներին:

⁴ St' u Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920., <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>.

⁵ St' u Հայաստանը... փաստաթղթերում, էջ 677:

⁶ St' u նույն տեղում:

⁷ St' u նույն տեղում:

ակնհայտ է, որ շահագրգիռ կողմերին սահմանային հարցերում չէր հաջողվելու համաձայնության գալ, և այդ հարցը նույնպես թողնվելու էր գլխավոր դաշնակից տերությունների որոշմանը:

Հայաստանի Հանրապետությանը դեպի Սև ծով ելք ապահովելու դրույթն ավելի էր հստակեցվում 352-րդ հոդվածով, որով նրան Տրապիզոնի նավահանգստի վրայով Սև ծով ազատ մուտք ունենալու իրավունք էր տրվում: Ավելին, Ազգերի լիգայի որոշմամբ Տրապիզոնի նավահանգստում Հայաստանին առհավետ վարձակալության էր հանձնվելու մի տեղամաս, որի շահագործման պայմանները՝ ներառյալ վարձավճարի չափը որոշվելու էր Հայաստանի, Թուրքիայի մեկական անդամներից և Ազգերի լիգայի կողմից նշանակված ներկայացուցչից բաղկացած խառը հանձնաժողովի կողմից⁸: Բացի այդ, 351-րդ հոդվածով Վրաստանի, Ադրբեջանի ու Պարսկաստանի հետ մեկտեղ Հայաստանին դեպի Սև ծով ազատ մուտքի իրավունք էր տրվում նաև Բաթումի նավահանգստից⁹: Այսինքն՝ Հայաստանը Տրապիզոնի և Բաթումի երկու նավահանգիստներով ելք էր ստանում դեպի Սև ծով, իսկ պայմանագրի 349-րդ հոդվածով այդ նավահանգիստներից ազատ տարանցիկության իրավունք էր տրվում դեպի Էգեյան և Միջերկրական ծովեր¹⁰: Ակնհայտ է, որ սևծովյան երկու նավահանգիստներից օգտվելու և Միջերկրական ծով ազատ դուրս գալու իրավունքը լուրջ հնարավորություններ կստեղծեին Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը մեղմելու համար:

Սևրի պայմանագրի այս հոդվածների վերաբերյալ բավական ուշագրավ էին **Նիկոդայոս Ադոնցի** 1920թ.-ի նոյեմբերի 20-ին Լոնդոնում հրատարակված հոդվածում տեղ գտած դիտարկումներն ու մեկնաբանությունները, որոնք այսօր էլ չեն կորցրել արդիականությունը: Նա դրական էր համարում, որ պայմանագրի 88-րդ հոդվածով փաստացի ճանաչվում էր Հայաստանի անկախությունը, 89-րդ հոդվածով հստակեցվում էին ապագա հայ-թուրքական սահմանները, սակայն, ըստ պատմաբանի, գերադասելի կլիներ, որ հստակորեն մատնանշվեր, որ ամենից առաջ Թուրքիան պետք է ճանաչի ինդոռ առարկա հայկական վիլայեթների զիջումը¹¹:

Անշուշտ, Ադոնցը չէր կարող չիմանալ, որ Սևրի պայմանագրի 90-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվել էր ճանաչել ապագա հայ-թուրքական սահմանը և հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ դրա որևէ մասը Հայաստանին փոխանցելու որոշման օրից հրաժարվելու էր հանձնված տարածքների նկատմամբ իր բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից¹²: Ուրեմն պատմաբանն ըստ Էոլթյան նկատի ուներ այն, որ Սևրի պայմանագրի տեքստում բացակայում էին Արևմտյան Հայաստանի նահանգների տարածքները Հայաստանի Հանրապետությանն անարգելի փոխանցելու երաշխիքներին վերաբերող դրույթներ: Ադոնցը փաստորեն մտահոգություն էր հայտնում, որ պայմանագրում հստակեցված չէ, **թե հաղթանակած տերություններն ի՞նչ միջոցների են պատրաստ դիմել, եթե համաշխարհային պատերազմում պարտություն կրած թուրքական կողմը չկատարեր իր ստանձնած պարտավորությունները կամ փորձեր խոչընդոտել այդ դրույթների իրագործմանը:** Պատմաբանի այդ մտահոգություններն ամենևին էլ հիմնազուրկ չէին, քանի որ Թուրքիայում իշխանությունն իր ձեռքը վերցնող ազգայնական շարժման առաջնորդ Մուստաֆա Զեմալը արդեն իսկ հայտարարում էր, որ չի ճանաչում սուլթանական կառավարության կողմից ստորագրված Սևրի պայմանագիրը և դրանով թուրքական պետության ստանձնած պարտավորությունները:

⁸ Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, пер. с фр., изд. Литиздата НКВД, М., 1927. С. 112.

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ **Ադոնց Ն.**, Հայկական հարցի լուծման շուրջ, Ե., 1989, էջ 16:

¹² Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. С. 31.

Մեծ տերությունները, թերևս, նման երաշխիք էին համարում այն, որ դեռ 1920թ.-ի ապրիլի 26-ին Սան-Ռեմոյի կոնֆերանսում Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը հայ-թուրքական սահմանի սահմանագծման հարցում իրավարար դառնալու՝ ԱՄՆ-ի նախագահին ուղղված առաջարկը զուգորդել էր ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկին: Չույգ առաջարկների տրամաբանությունն այն էր, որ այն պետությունը, որի նախագահը կստանձնի Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանի որոշումը, պետք է ապահովի միացված տարածքներով հանդերձ Հայաստանի անվտանգությունը, ինչը դրսևորվելու էր տվյալ երկրի կողմից միացյալ տարածքներով Հայաստանի մանդատի ստանձման ճանապարհով: Այսպիսով՝ Սան-Ռեմոյի կոնֆերանսում Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը խնդիրը փորձում էր փոխանցել ԱՄՆ-ին, սակայն տվյալ առաջարկը հաղթանակած տերությունների կողմից արվում էր այն ժամանակ, երբ ԱՄՆ-ի վերաբերմունքն այդ հարցի նկատմամբ արդեն որոշակի էր:

Դեռևս 1919թ.-ի աշնանը ԱՄՆ-ի նախագահի հանձնարարությամբ գեներալ Յ. Հարբորդը, տեղում ուսումնասիրելով իրավիճակը և բանակցելով անգամ թեմալականների հետ, Հայաստանի մանդատը ստանձնելու հարցում ելել էր այն եզրակացության, որ ԱՄՆ-ի համար միայն Հայաստանի մանդատը ստանձնելը չափազանց ծախսատար է և տեսակետ էր արտահայտել, որ եթե ԱՄՆ-ը, այնուամենայնիվ, որոշել է այդ տարածաշրջանում կառավարման մանդատ ստանձնել, ապա այն պետք է տարածվի ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Թուրքիայի ու Այսրկովկասի վրա¹³: Անուշտ, տվյալ տեսակետը տրամագծորեն հակասում էր եվրոպական տերությունների շահերին, որոնք չէին կարող թույլ տալ ԱՄՆ-ի այդչափ հզորացումը տարածաշրջանում, ուստի նման առաջարկ անելիս Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը թերևս պատկերացնում էր, որ ամենայն հավանականությամբ, ԱՄՆ-ը մերժելու է միայն Հայաստանի մանդատի ստանձնումը:

Եվ իսկապես, 1920 թվականի հունիսի 1-ին ԱՄՆ-ի Սենատը 52 «դեմ», 23 «կողմ» ձայների հարաբերակցությամբ մերժեց Հայաստանի մանդատի ստանձնումը, որից հետո Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը պարտավոր էր մտածել նոր երաշխիքների մասին, ինչը կարող էր դրսևորվել Սևրի պայմանագրում հատուկ երաշխիքային հոդվածի կամ հոդվածների նախատեսումով: Ոչինչ չէր խանգարում նրանց նման հոդված կամ դրույթներ նախատեսել պայմանագրի տեքստում: Խնդիրը պարզապես այդ երկրների քաղաքական կամքն էր, ինչը նրանք, օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներից ելնելով, չցանկացան դրսևորել: Այդ հանգամանքն է՛լ ավելի կարևոր էր, եթե հաշվի առնենք եվրոպական դիվանագիտության՝ ավանդական դարձած խարդավանքներն ու Թուրքիայում ստեղծված նոր իրավիճակը, երբ փաստացի իշխանությունն անցել էր թեմալականների ձեռքը, որոնք հրաժարվում էին ճանաչել Թուրքիայի օրինական իշխանության կողմից ստորագրած Սևրի պայմանագիրը և հատկապես տարածքային գիշումները:

Սևրի պայմանագիրը հատկանշական էր նաև նրանով, որ տվյալ փաստաթղթի 62-64-րդ հոդվածներով առաջին անգամ միջազգային մակարդակով արձարծվում էր քրդական հարցը: Պայմանագրի 62-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթի ուժի մեջ մտնելուց հետո վեցամյա ժամկետում Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ներկայացուցիչներից ձևավորված հանձնաժողովի կողմից Եփրատից արևելք՝ Հայաստանի հարավային սահմաններից հարավ՝ Սիրիայի ու Միջագետքի հետ Թուրքիայի սահմանից հյուսիս ընկած տարածքների վրա թուրքական պետության կազմում պետք է ստեղծվեր քրդական ինքնավարություն¹⁴: Տվյալ հոդվածում կարևոր էր այն արձանագրումը, որ քրդական ինքնավարությունը պետք է

¹³ Ст'ю Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), Е., 1995, С. 10–11.

¹⁴ Ст'ю Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920., <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>.

ստեղծվել «Եփրատից արևելք» և «Չայաստանի հարավային սահմաններից հարավ», այսինքն՝ Չայաստանին միացվելիք Վանի և Բիթլիսի նահանգների տարածքներից հարավ-արևելք և հարավ ընկած տարածքներում:

Պայմանագրի 63-րդ հոդվածը թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր համակերպվել այդ իրողության հետ և որոշման կայացումից եռամսյա ժամկետում նշված տարածքներում ստեղծել Զրդական ինքնավարություն: 64-րդ հոդվածով էլ ինքնավարության ստեղծումից մեկ տարի անց Ազգերի Լիգայի խորհրդի հովանավորությամբ քրդերին հնարավորություն էր տրվում հանրաքվեի միջոցով անկախանալ Թուրքիայից, որը պետք է համակերպվեր այդ որոշման հետ և հրաժարվեր այդ տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից ու իրավահիմունքներից¹⁵: Այսպիսով՝ ըստ ՍԼԻԻ պայմանագրի՝ Չայաստանի Չանրապետությանը միացվելիք Արևմտյան Չայաստանի Բիթլիսի ու Վանի նահանգների տարածքները հարավ-արևելքից ու հարավից սահմանակից էին լինելու սկզբում Զրդական ինքնավարության, իսկ հետագայում՝ նաև քրդական հավանական անկախ պետության հետ:

Այդ կապակցությամբ Ն. Ադոնցը հիմնավոր կերպով մտահոգություն էր արտահայտում, որ Դերսիմի ու Խարբերդի սանջակները, որոնք իրականում և՛ աշխարհագրական, և՛ էթնիկ առումներով Չայկական բարձրավանդակի անբաժան մասն էին կազմում, փոխանցվում էին Զրդստանին¹⁶: Այսպիսով՝ ապագա քրդական պետությունը ստեղծվելու էր մասամբ նաև հայ ժողովրդի հայրենիքի հաշվին:

Նման որոշման հիմք Ադոնցը տեսնում էր դեռևս պատերազմի ընթացքում 1916 թ.-ին կնքված ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագիրը, որին նախորդել էր Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական գաղտնի համաձայնությունը, որոնցով Արևմտյան Չայաստանը մասնատվում էր ճիշտ և ճիշտ Խարբերդի գծի երկայնքով¹⁷: Տվյալ պարագայում այդ գաղտնի համաձայնագրի կողմ Ռուսաստանի՝ իբրև հակակշիռ պետության՝ այդ գործընթացից ինքնամեկուսացման պայմաններում հայկական պատվիրակություններին չէր մնում ոչինչ, քան համակերպվել ոչ միայն տվյալ հատվածի, այլև Կիլիկիայի կորստի հետ՝ միաթարվելով նրանով, որ պատմական հայրենիքի մի զգալի հատված միացվում էր Չայաստանին:

Զրդական հարցը, Զրդստանի ստեղծումը և հայ-քրդական հարաբերությունների հետ կապված խնդիրները խիստ արդիական են նաև մեր օրերում: Ներկայումս ընթացող աշխարհաբաղադրական գործընթացների պայմաններում, երբ կրկին ազդեցիկ տերությունները սկսում են օգտագործել քրդական խաղաքարտը, բոլորը հասկանում են, որ միջազգային իրավունքի տեսակետից ՍԼԻԻ պայմանագիրը միակ փաստաթուղթն է, որը պետականության իրավական հիմքեր է նախատեսել քրդերի համար: Այս տեսակետից նույնպես հնարավոր է համարվում ՍԼԻԻ պայմանագրի վերաբարձրումը, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու է հայ-քրդական հարաբերությունների, մասնավորապես տարածքների ու սահմանների հարցի քննարկմանը: Անշուշտ, կարելի է միանալ Ադոնցի վրդովմունքին, որ որոշ հայկական տարածքներ ՍԼԻԻ պայմանագրով նախատեսվում էր հանձնել քրդերին, որոնք անմիջական մասնակցություն էին ունեցել հայոց ցեղասպանության իրականացման գործում, սակայն կարծում ենք, որ հնարավոր բարդություններից խուսափելու նպատակով միակ խելամիտ ելքը հայ-քրդական հարաբերությունների բոլոր խնդիրները ՍԼԻԻ պայմանագրի շրջանակներում կարգավորելն է:

Օսմանյան կայսրության ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի իրավունքների պաշտպանության տեսակետից կարևորություն են ներկայացնում ՍԼԻԻ պայմանագրի 125 և 142-րդ հոդվածները:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ **Ադոնց Ն.**, Չայկական հարցի լուծման շուրջ, էջ 19:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

Պայմանագրի 125-րդ հոդվածով կայսրությունից անջատված տարածքներում հաստատված ոչ թուրք բնակչությանը պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում ազատ իրավունք էր տրվում իր ազգային պատկանելությանը համապատասխան պետության քաղաքացիություն ընդունելու¹⁸: Այս հոդվածով փաստորեն հաստատվում էր ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնից ակնկալվող Իրավարար վճռով Օսմանյան կայսրությունից անջատվելիք Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգներում դեռևս ողջ մնացած, ինչպես նաև կայսրությունից անջատված արաբական երկրներում ապաստանած նախկին օսմանահպատակ հայերի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ընդունելու իրավունքը:

Ուշագրավ է, որ պայմանագրի 142-րդ հոդվածով 1914թ.-ի նոյեմբերի 1-ից, այսինքն՝ Օսմանյան կայսրության Առաջին աշխարհամարտի մեջ մտնելու պահից, այդ երկրում հաստատված վարչակարգը ահաբեկչական էր որակվում: Երիտթուրքերի վարչակարգին տրված այս քաղաքական գնահատականից ելնելով՝ նույն հոդվածում նշվում էր, որ հիշյալ ամսաթվից հետո կայսրությունում քրիստոնյաների դավանափոխությունները եղել են բռնության հետևանք, ուստի դրանից առաջ քրիստոնյա եղածներին իրավունք է տրվում ազատ վերադառնալ իրենց կրոնին¹⁹: Այս կետով փաստորեն արձանագրվում էր պատերազմի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից կայսրության ոչ մահմեդական բնակչությանը, այդ թվում՝ հայերին ոչ միայն ցեղասպանության ենթարկելու, այլև բռնի իսլամացնելու քաղաքականությունը՝ ընդգծելով բռնի իսլամացված հայերի, հույների և ասորիների՝ իրենց հավատքին ազատ վերադառնալու իրավունքը:

Նույն հոդվածով դատապարտվում են պատերազմի ժամանակ կայսրության բնակչության նկատմամբ գործադրած վայրագությունները և օսմանյան կառավարության վրա պարտավորություն է դրվում որոնել և ազատ արձակել 1914թ.-ի նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առևանգված, ներկայված և ազատագրված ամեն ռասայի ու կրոնի անձանց²⁰: Ակնհայտ է, որ այս դեպքում նույնպես խոսքը թուրքական իշխանությունների կողմից զանգվածային բնաջնջման ու բռնագաղթի ենթարկված կայսրության ոչ մահմեդական, ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի մասին է: Ինչպես հայտնի է, ցեղասպանության ընթացքում առևանգվել էին տասնյակ հազարավոր հայ աղջիկներ ու կանայք, որոնք հարճի կարգավիճակում պահվում և սեռական բռնությունների էին ենթարկվում ինչպես մահմեդականների տներում, այնպես էլ հարեմներում: Բացի այդ, տասնյակ հազարավոր որբացած հայ մանուկներ պահվում էին թուրքական պետական որբանոցներում և դաստիարակվում էին որպես թուրք, իսկ նրանց մի մասն էլ ստրուկի կարգավիճակում պահվում ու շահագործվում էր թուրքական կամ քրդական ընտանիքներում: Սևրի պայմանագրի 142-րդ հոդվածի տվյալ դրույթով փաստորեն հնարավորություն էր ընձեռնվում իրենց կամքին հակառակ գերեվարված հայ կանանց, աղջիկներին ու որբերին փրկել անխուսափելի ուժացումից և ազատ արձակել: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված հսկայական ժողովրդագրական կորուստները ինչ-որ չափով մեղմելու տեսակետից պատերազմում պարտված հանցավոր թուրքական պետության հետ խաղաղության պայմանագրում այս դրույթի ամրագրումը առավել քան կարևոր էր:

Միանգամայն բնական է, որ նման կարևոր ու պատասխանատու գործը չէր կարող վստահվել այդ ամենի համար պատասխանատու թուրքական իշխանություններին, ուստի նախատեսվում էր Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից ստեղծել **խառը հանձնաժողով**, որը տուժածների, նրանց ընտանիքի անդամների ու մերձավորների բողոքների

¹⁸ Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. С. 38.

¹⁹ Там же, С. 41.

²⁰ Նույն տեղում:

հիման վրա հետաքննություններ էր իրականացնելու՝ նշված խմբերի անձանց հայտնաբերելու և ազատ արձակելու նպատակով: Իր հերթին օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ամեն կերպ աջակցել այդ հանձնաժողովի գործունեությանը, ապահովել նրա որոշումների կատարումը, երաշխավորել տուժածների իրավունքների վերականգնումը և նրանց անվտանգությունը²¹: Պայմանագրի 142-րդ հոդվածում այս դրույթի ներառումը վկայում է այն մասին, որ հաղթանակած տերությունները հիմնավոր կասկածներ ունեին առ այն, որ թուրքական իշխանությունները կարող էին փորձել արհեստական խոչընդոտներ ստեղծել տվյալ գործընթացի համար, այդ պատճառով էլ թուրքական կողմի վրա նման պարտավորություններ էին դրվում:

Ձևագվածային բնաջնջման ու բռնազաղթի ենթարկված օսմանահայատակ ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ հոդվածներից բացի, Սևրի պայմանագրում տեղ են գտել նաև վերջիններիս ունեցվածքի բռնազավթումը դատապարտող և նրանց հասցված նյութական վնասների դիմաց հատուցում նախատեսող հոդվածներ:

Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածը օսմանյան կառավարությանը պարտավորեցնում էր ոչ միայն ուժը կորցրած ճանաչել իր կողմից ընդունված «Լբյալ գույթի մասին» 1915 թ.-ի ժամանակավոր օրենքն ու դրա լրացումները, որոնցով «օրինականացվել» էր ցեղասպանության ենթարկված արևմտահայության զանգվածային ունեզրկման քաղաքականությունը, այլև արգելում էր նման օրենքների ընդունումն ապագայում²²: Այս հոդվածի նշանակությունը չափազանց կարևոր էր ցեղասպանության զոհ դարձած հայերի իրավունքները վերականգնելու տեսակետից: Տվյալ հոդվածում սահմանվում էին նաև կոնկրետ մեխանիզմներ, որոնցով վերականգնվելու էին արևմտահայության սեփականության իրավունքները իրենց ունեցվածքի նկատմամբ:

Հիշյալ հոդվածով թուրքական կառավարությունը հնարավորության սահմաններում պարտավորվում էր նպաստել կայսրության այլազգի այն քաղաքացիների վերադարձին իրենց բնակավայրերը, որոնք աքսորվել կամ 1914թ.-ի հունվարի 1-ից հետո գաղթել էին զազանությունների հանդեպ ունեցած վախի պատճառով²³: Տվյալ դեպքում խոսքը Թալեթ փաշայի նախաձեռնությամբ 1915թ.-ի մայիսի 30-ին երիտթուրքական կառավարության կողմից ընդունված «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքով «օրինականացված» բռնազաղթի ենթարկված և դեռևս հրաշքով ողջ մնացած հայերի չնչին հատվածին իրենց բնակավայրերը վերադարձնելու մասին էր: Ավագ, նրանց մեծ մասն արդեն իսկ ոչնչացվել էր «մահվան քարավաններում»՝ գաղթի ճանապարհների կամ էլ Սիրիայի ու Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում:

Դրանից բացի, նույն հոդվածով թուրքական կառավարությունն ընդունում էր, որ կայսրության հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող անշարժ կամ շարժական գույքը հայտնաբերվելու դեպքում, ում ձեռքում էլ այն գտնվի, որքան հնարավոր է շուտ պետք է վերադարձվի օրինական տերերին: Ընդ որում, վերադարձվող գույքը պետք է ազատված լինի պարտքերից, որոնցով կարող էր ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից և վերադարձվելու էր առանց նոր սեփականատերերին և օգտագործողներին որևէ հատուցում տրամադրելու²⁴: Այս պնդումն ուղղակիորեն բխում էր 144-րդ հոդվածի առաջին իսկ պարբերությամբ «Լբյալ գույթի մասին» ժամանակավոր օրենքը չեղյալ հայտարարելու դրույթից՝ անօրինական համարելով նաև այդ օրենքից ածանցվող «Լբյալ գույթի հանձնաժողովների» որոշումներով ու կեղծ աճուրդների միջոցով օրինական սեփականատերերին, տվյալ դեպքում՝ հայերին իրենց անշարժ գույթից

²¹ Նույն տեղում, էջ 42:

²² Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. С. 42.

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում:

գրկելու բոլոր գործողությունները: Այսպիսով՝ հայերի գույքին ցեղասպանության և ապօրինիությունների հետևանքով տիրացած թուրքերը, քորդերը կամ մահմեդական վերաբնակիչները՝ մուհաջիրները, այդ գույքի օրինական սեփականատերեր չէին ճանաչվում, հետևաբար նրանց որևէ հատուցում չտրամադրելու որոշումը միանգամայն իրավաչափ էր:

Ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի սեփականության իրավունքների վերականգնման դրույթներ սահմանելուց բացի, 144-րդ հոդվածով նախատեսվում էին նաև տվյալ գործընթացի վերահսկման մեխանիզմները: Օսմանյան կառավարությունը համաձայնվում էր, որ Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից ստեղծվեն միջևորդ հանձնաժողովներ թուրքական կառավարության և տուժած համայնքի մեկական ներկայացուցիչների և Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից նշանակված նախագահի կազմով՝ սեփականության հետ կապված հարցերն ու վեճերը քննելու և լուծելու համար: Այդ հանձնաժողովները օժտվում էին լայն լիազորություններով՝ իրավասու լինելով որոշումներ կայացնել՝

ա) գույքի վերանորոգման ու վերականգնողական աշխատանքներ կատարելու հետ կապված,

բ) վայրագությունների կամ տեղահանությունների մեղավորներին մեկուսացնելու և այդ անձանց գույքի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու հարցերում,

գ) 1914թ. հունվարի 1-ից հետո տուժած համայնքի մահացած կամ անհետացած անդամներին պատկանող գույքի և ամեն տեսակ սեփականության վերադարձնելու հարցերում,

դ) 1914թ. հունվարի 1-ից հետո անշարժ գույքի վաճառքի կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքների հաստատման ակտերի չեղյալ հայտարարելու հարցերի հետ կապված:

Հատկանշական է, որ այն դեպքերում, երբ հանձնաժողովը գույքի նկատմամբ չեղյալ կհամարեր նոր տերերի իրավունքները, վերջիններիս փոխհատուցում տրամադրելու պարտականությունը դրվում էր թուրքական կառավարության վրա, ինչը առիթ չպետք է դառնար այդ գույքի օրինական տերերի իրավունքների վերականգնումը ուղացնելու համար²⁵: Հայերի անշարժ ու շարժական գույքին ցեղասպանության ու զանգվածային ունեզրկման հետևանքով ապօրինաբար տիրացած մահմեդականներին փոխհատուցելու պարտավորությունը թուրքական կառավարության վրա դնելու դրույթն առավել քան օրինաչափ էր, քանզի այդ բոլոր ապօրինությունների պատասխանատուն հենց թուրքական պետությունն էր՝ իր վարած հանցավոր քաղաքականությամբ:

Հայերի բռնազավթված գույքի վերադարձի գործընթացում թուրքական կողմի հնարավոր հակազդեցությունները կանխելու նպատակով Նույն հոդվածում ամրագրված էր, որ օսմանյան կառավարությունը պարտավորվում է հնարավորության սահմաններում նպաստել հանձնաժողովի որոշումների կատարմանը, որոնք անբեկանելի են և դրանց չի կարող հակադրվել օսմանյան դատական կամ վարչական իշխանությունների կողմից ընդունված որևէ որոշում²⁶:

Այսպիսով՝ ցեղասպանության հետևանքով հայերի կրած նյութական կորուստների վերականգնման և դրանց հետևանքների հաղթահարման առումով Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածում առաջ էին քաշվում բավականին իրատեսական միջոցներ ու մեխանիզմներ, որոնք չեն կորցրել արդիականությունը և լիարժեք կերպով կարող են դրվել հայոց ցեղասպանության նյութական հետևանքների վերացման գործընթացի հիմքում²⁷: Միայն որպես ճշտում թերևս կարելի հավելել այն, որ գույքային իրավունքների

²⁵ Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. С. 43.

²⁶ Նույն տեղում:

²⁷ **Մարության Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., Ե., 2014, էջ 104:

վերականգնման հարցերով զբաղվող միջևորդ հանձնաժողովի նախագահ արդեն պետք է նշանակվի ոչ թե Ազգերի Լիգայի Խորհրդի, այլ այդ կառույցի ժառանգորդ ՄԱԿ-ի համապատասխան մարմնի՝ Անվտանգության Խորհրդի կողմից առաջարկված անձը:

Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածին լրացնելու էին գալիս 285 և 288 հոդվածները, որոնցով նախատեսվում էր, որ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակությունն ipso facto* ձեռք բերած նախկին թուրքահպատակների՝ Թուրքիայում մնացած ունեցվածքը, իրավունքներն ու շահերը ներկա կամ մեկ այլ պայմանագրով Թուրքիայից անջատված տարածքներում պետք է նրանց վերադարձվեն իրենց ներկա վիճակով²⁸: Սա նշանակում էր, որ թուրքական իշխանությունների կողմից հայերին այդ երկրի քաղաքացիությունից զրկելը կամ նրանց կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը չէր կարող իրավական հիմք հանդիսանալ վերջիններիս ունեցվածքից կամ գույքային իրավունքներից զրկելու համար:

Առաջին աշխարհամարտի ընթացքում հանցագործություններ կատարած պետական պաշտոնյաների նկատմամբ պատժամիջոցներ նախատեսող հոդվածների ամրագրումը ոչ միայն Սևրի, այլ նաև դրան նախորդած Վերսալի, Սեն-ժերմենի, Տրիանոնի, Նեյի պայմանագրերում պայմանավորված էր Փարիզի կոնֆերանսում դեռևս 1919թ.-ի հունվարի 25-ից կազմավորված «Պատերազմ սանձազերծելու պատասխանատվության և պատիժների» հանձնաժողովի գործունեությամբ: Հանձնաժողովը կազմված էր տարբեր երկրներ ներկայացնող 15 անդամներից, որոնց թվում կային նաև իրավաբան-միջազգայնագետներ: Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոլաս Պոլիտիսի նախաձեռնությամբ «Տասնհինգի հանձնաժողովը» 1919թ.-ի մարտի 5-ին ընդունեց առաջին զեկույցը, որով համաշխարհային պատերազմի տարիներին կատարված հանցագործություններից առանձնացվեցին ոչ միայն Հաագայի կոնվենցիան խախտող «պատերազմական հանցագործությունները», այլև մասնավորապես Օսմանյան կայսրությունում «մարդկության դեմ կատարված հանցագործությունները» ոչ թուրք խմբին պատկանող մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը²⁹: «Տասնհինգի հանձնաժողովի» այդ զեկույցը փաստորեն հիմնված էր ոչ միայն Հաագայի 1899թ.-ի և 1907թ.-ի կոնվենցիաների նախաբանում ամրագրված «Մարտենսի վերապահման»*, այլև Անտանտի տերությունների կողմից ընդունված 1915թ.-ի մայիսի 24-ի հռչակագրի վրա, որում նրանք Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային բնաջնջումն անվանում էին «հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ»³⁰:

* Լատ. «փաստի ուժով»:

²⁸ Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, p. 66. <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>

²⁹ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, отв. ред., автор предисловия и комментария д.и.н., профессор **Ю.Г.Барсегов**, т. 2, ч. 2, М., 2005, С. 258.

* Ականավոր իրավաբան-միջազգայնագետ Ֆ. Մարտենսի առաջարկով սկզբում Հաագայի 1899թ. «Պատերազմի վարման օրենքների և սովորույթների մասին», իսկ այնուհետև 1907թ. «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաների նախաբանում ամրագրվեց, որ «մինչև պատերազմի վերաբերյալ օրենքների ավելի լիակատար օրենսգրքի հրապարակումը պայմանավորվող Բարձր կողմերը տեղին են համարում հաստատել, որ իրենց կողմից ընդունված կանոնակարգերով չնախատեսված դեպքերում բնակչությունը և պատերազմող կողմերը շարունակում են գտնվել միջազգային իրավունքի սկզբունքների պաշտպանության և գործողության ներքո, որոնք բխում են քաղաքակրթոր ազգերի միջև հաստատված սովորույթներից, մարդկայնության օրենքներից և հասարակական գիտակցության պահանջներից»: Տե՛ս Международное право. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001, С. 19.

³⁰ Տե՛ս Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1878–1917, М.–Л., 1931–1940, серия III, т. 7, ч. 2, С. 252.

Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակությունների Հունաստանի ներկայացուցիչ Պոլիտիսի միջոցով 1919թ.-ի մարտի 14-ին «Տասնհինգի հանձնաժողովին» ներկայացվեց մի հուշագիր, որում մասնավորապես ասվում էր. «...հանցագործությունը քաղաքական բնույթ ուներ, ծրագրված է եղել քաղաքական կազմակերպության կողմից, որը ստացել էր օսմանյան խորհրդարանի պատգամավորների ավելի քան երկու երրորդի ձայնը: Այն կազմակերպվել է կառավարության կողմից, ղեկավարվել պետական, զինվորական պաշտոնյաների և տեղական իշխանությունների ու ազդեցիկ գործիչների կողմից և իրագործվել է ժանդարմերիայի, զինվորների ու խաժամուժի միջոցով: Հետևաբար մենք լիովին իրավունք ունենք հանցագործության իրական մեղավորներ համարել այն անձանց, որոնք սկսած 1915 թ. ապրիլից գլխավորում էին վերը նշված պաշտոնները»³¹:

Հայկական հուշագրում հիշատակվում էր նաև 1915թ.-ի մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագիրը. այդպիսով հիշեցվում էր նրանց կողմից «մարդկության դեմ հանցագործություն» կատարողներին պատժելու՝ այդ երկրների ստանձնած պարտավորությունը: Փաստաթղթում հայերի զանգվածային կոտորածների մեջ մեղավորները դասակարգվում էին չորս խմբի՝ կոտորածները ծրագրողների, կազմակերպիչների կամ հրաման տվողների, կոտորածների իրականացումը ղեկավարողների և անմիջական կատարողների: Մատնանշվում էին նաև առաջին խմբերի պատասխանատուների անունները՝ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ, Շաքիր, և պահանջվում էր դատական գործ հարուցել նրանց դեմ, ընդ որում, ոչ թե թուրքական դատարաններում, ինչպես փորձում էին անել թուրքական սոր իշխանությունները, այլ դաշնակից կառավարությունների կողմից հիմնված միջազգային դատական ատյաններում³²:

1919թ.-ի մարտի 29-ի եզրափակիչ զեկուցագրում «Տասնհինգի հանձնաժողովը», հաշվի առնելով մի շարք պատվիրակությունների, այդ թվում նաև՝ հայկական պատվիրակության հուշագիրը, որոնցով «մարդկության օրենքների» դեմ կատարված ծանր հանցագործությունների մասին բազում փաստեր ու ապացույցներ էին ներկայացվում, եկավ այն եզրակացության, որ Քառյակ դաշինքի գլխավոր տերություններ, իրենց դաշնակից Թուրքիայի ու Բուլղարիայի հետ «պատերազմ վարել են բարբարոսական և հակաօրինական միջոցներով՝ խախտելով պատերազմ վարելու օրենքներն ու սովորույթները և մարդկության տարրական օրենքները»³³: Այս որոշումից ելնելով՝ առաջարկվում էր տարբեր երկրների ներկայացուցիչներից բաղկացած միջազգային տրիբունալ ստեղծել, որը պետք է իրավասություն ունենար քննելու պատերազմ վարելու օրենքների և սովորույթների, ինչպես նաև մարդկության օրենքների խախտման գործերը՝ պատասխանատվության ենթարկելով նման խախտումներ կատարած պետությունների նախկին ղեկավարներին³⁴:

Միանգամայն բնական է, որ Փարիզի խաղաղության վեհաժողովի շրջանակներում գործող «Տասնհինգի հանձնաժողովի» եզրափակիչ զեկույցի դրույթները պետք է իրենց արտահայտությունը գտնեին հաղթանակած տերությունների և պարտվող երկրների միջև ստորագրված խաղաղության պայմանագրերում՝ մասնավորապես Վերսալի պայմանագրի 227-րդ և Սևրի պայմանագրի 226, 228 և 230-րդ հոդվածներում:

Սևրի պայմանագրի 226-րդ հոդվածով Օսմանյան կառավարությունը ճանաչում էր դաշնակից պետությունների ազատությունը՝ դատական գործ հարուցելու իրենց ռազմական դատարանների առջև պատերազմական սովորույթներին ու օրենքներին հակասող

³¹ Տե՛ս **Gotikian G.**, La question arménienne, de la vielle de la grande guerre au traité de Lausanne d'après les archives françaises, Thèse dactylographiée, Saint-Etienne, 1997, t. 3, p. 74.

³² Տե՛ս Նույն տեղում, էջ 75:

³³ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, М., 2002, С. 700.

³⁴ Նույն տեղում, էջ 700-701:

արարքներ գործած անձանց դեմ: Օրենքներով նախատեսված պատիժներ պետք է կիրառվեին մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ՝ անկախ բոլոր դատավարություններից կամ դատական գործերից, որոնք հարուցված էին Թուրքիայի կամ նրա դաշնակիցների դատական ատյանների կողմից³⁵: Սա նշանակում էր, որ դաշնակից տերություններն իրենց իրավունք էին վերապահում դատել պատերազմական հանցագործներին անկախ այն բանից, թե Թուրքիան կամ նրա դաշնակիցներն իրենց դատարաններում կդատեի՞ն այդ հանցագործներին, թե՞ ոչ: Այս հողվածի տրամաբանությունը թերևս բխում էր հենց երիտթուրք պարագլուխների դատավարությունից, որոնցից գլխավոր պատասխանատուներին հաջողվեց խուսափել «թուրքական արդարադատությունից»:

Այնուհետև հողված 226-ում խոսվում էր պատերազմական հանցագործներին հանձնելու մասին. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հանձնել դաշնակից տերություններին կամ նրանցից որևէ մեկին, որը կդիմի նրան այդ պահանջով, բոլոր այն անձանց, ովքեր կմեղադրվեն պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասող որևէ արարք գործելու մեջ, կմատնանշվեն անվանաբար, թե ըստ աստիճանի, կատարած պարտականության կամ զբաղեցրած պաշտոնի, որոնք շնորհվել են այդ անձանց օսմանյան իշխանությունների կողմից»³⁶: Այս դրույթները կատարելու գործում, սակայն, դաշնակից տերությունները հետևողական չգտնվեցին:

228-րդ հողվածով Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր մեղսագրվող փաստերին լրիվ ծանոթանալու նպատակով դատաքննությանն ապահովել ցանկացած բնույթի փաստաթղթերով ու տեղեկություններով՝ մեղավորներին որոնելու և պատասխանատվությունների չափը ճշգրիտ որոշելու համար³⁷: Սևրի պայմանագիրն այսպիսով իրավական հիմք էր ստեղծում օսմանյան պետության կողմից իր հպատակ այլ բաղաբացիների դեմ գործած ոճիրների դատական հետապնդման համար: Սակայն այն շարադրվել է այն ժամանակ, երբ 1918–1919 թթ.-ին անգլիացիները ձախողվեցին օսմանյան կառավարությունից այնպիսի փաստաթղթեր ու տեղեկություններ ստանալու հարցում, որոնք նրանց հնարավորություն կտային դատական գործեր հարուցել ենթադրյալ մարդասպանների դեմ³⁸: Սևրի պայմանագրի 226 և 228 հողվածները բխում էին Հաագայի 1899թ.-ին և 1907թ.-ին խմբագրված «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաների դրույթներից և կրկնում էին պատերազմական հանցագործներին պատժելու մասին Վերսալի և այլ պայմանագրերում տեղ գտած հողվածները:

Ստեղծված իրավիճակում թուրքական նոր իշխանությունները սկսեցին արագացնել թուրքական ռազմական տրիբունալներում երիտթուրք պարագլուխների դատավարության ընթացքը՝ մտավախություն ունենալով, որ հետագայում կարող էին ստեղծվել ինչպես պատերազմական հանցագործություններ, այնպես էլ մարդկության դեմ հանցագործություններ կատարած նախկին բարձրաստիճան պաշտոնյաներին քրեական պատասխանատվության ենթարկող միջազգային տրիբունալ, ինչի մասին պատերազմի ավարտից հետո շատ էր խոսվում: Միջազգային տրիբունալում ակնհայտ կդառնար հայերի զանգվածային բնաջնջման կազմակերպման գործում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների դերակատարումը՝ թուրքական պետության համար դրանից բխող ծանր հետևանքներով:

³⁵ Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000. С. 184.

³⁶ Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>.

³⁷ Տե՛ս նույն տեղում:

³⁸ Տե՛ս Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Ե., «Նահապետ», 2003, էջ 10-11:

Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածի համաձայն՝ թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքը՝ քրեական պատասխանատվության կանչել ոչ միայն այն անձանց, որոնք մեղադրվում էին պատերազմի օրենքների ու սովորույթների դեմ կատարված հանցագործությունների մեջ, այլև պարտավորվում էր նաև դաշնակից տերություններին հանձնել նրանց կողմից կոտորածների մեջ մեղադրվող անձանց, որոնք պատերազմի ընթացքում հանցագործություններ էին կատարել այն տարածքներում, որոնք 1914թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ հանդիսանում էր Օսմանյան կայսրության մի մասը³⁹:

Հատկանշական է, որ 1948թ.-ի մայիսի 28-ի զեկույցում ՄԱԿ-ի «Պատերազմական հանցագործությունների» հանձնաժողովը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել հատկապես Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածին և մեկնաբանել է այնպես, որ դրանով հաղթանակած տերությունները նպատակ էին հետապնդում ի կատար ածել 1915թ.-ի մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրի պարտավորությունն առ այն, որ պատասխանատվության կանչվեն մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար մեղավորները, այսինքն՝ այն հանցագործությունների, որոնք թուրքական տարածքում կատարվում էին օսմանյան հպատակություն ունեցող ազգությամբ հայ կամ հույն հպատակների նկատմամբ: Հանձնաժողովի կարծիքով՝ հենց այդ է նախադեպ ծառայել Նյուրնբերգի և Տոկիոյի տրիբունալների կանոնադրությունների համապատասխանաբար 6c և 5c հոդվածների համար, այն է՝ մարդկության դեմ կատարված հանցագործություններ⁴⁰:

Ի տարբերություն 226 և 228 հոդվածների՝ 230 հոդվածը վերաբերում էր ոչ թե պատերազմական հանցագործություններին, այլ 1915թ.-ի մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հայտարարության հետևանքն էր, քանզի դաշնակիցները դեռ այն ժամանակ խոստացել էին պատասխանատվության կանչել հայերի զանգվածային սպանությունների մեջ մեղադրվողներին: Այս դրույթը կարևոր էր նաև այն իմաստով, որ թուրքական նոր իշխանությունները չէին կարող խուսափել Միջազգետքի անապատներում հայերի զանգվածային կոտորածներում մեղադրվող անձանց արտահանձնելուց այն հիմնավորմամբ, թե հանցագործությունները կատարել են այն տարածքներում, որոնք այլևս իրենց չեն պատկանում:

Նույն հոդվածով դաշնակից տերություններն իրենց իրավունք էին վերապահում նշել այն դատարանը, որը պետք է դատեր մեղադրվող անձանց, իսկ օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ճանաչել այդ դատարանը: Ընդ որում, նշվում էր միջազգային հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ հատուկ միջազգային քրեական դատարանի ստեղծման հնարավորության մասին: Այն դեպքում, եթե Ազգերի լիգան կստեղծեր նշված հանցագործությունները դատապարտող իրավասու դատարան, դաշնակից տերությունները մեղադրյալներին պետք է փոխանցեին այդ դատարանին, իսկ թուրքական կառավարությունը պարտավորվում էր ճանաչել այդ դատարանը⁴¹:

Նշված դրույթները հետագայում արտացոլվեցին ՄԱԿ-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948 թ.-ի դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի հոդվածներում՝ կապված այդ ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձանց հանձնելու և միջազգային տրիբունալ ստեղծելու գաղափարների հետ: Այս նկատառումներից պարզորոշ նկատվում էր, որ միջազգային սովորույթային իրավունքի նորմերն աստիճանաբար արտացոլվում էին նաև միջազգային պայմանագրերում և միջազգային սովորու-

³⁹ Stü Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>.

⁴⁰ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, М., 2003. С. 651.

⁴¹ Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена «комиссии примирения» Гюндюз Актана), М., «Готика», 2002. С. 32–33.

թային նորմեր լինելուց բացի վերածվում էին նաև միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի:

Եզրակացություն

Թեև Սևրի պայմանագիրը չվավերացվեց և ուժի մեջ չմտավ ինչպես Օսմանյան կայսրության ներքաղաքական, այնպես էլ աշխարհաքաղաքական գործընթացների պատճառով, այն միանգամայն օրինական փաստաթուղթ է: Չնայած տվյալ պայմանագրի ստորագրման պահին փաստացի իշխանությունը հիմնականում քեմալականների ձեռքում էր, այդուհանդերձ 1920թ.-ի հուլիսի 22-ին Երկրի օրինական իշխանությունը՝ ի դեմս Կ. Պոլսում գործող սուլթանի խորհրդի, լրիվ կազմով քվեարկեց խաղաղության պայմանագիրը ստորագրելու օգտին և պաշտոնական պատվիրակությանը լիազորեց ստորագրել Սևրի պայմանագիրը⁴²: Ինչպես հայտնի է, անգամ չվավերացված պայմանագիրն այն ստորագրած պետություններին ամբողջությամբ չի ազատում պարտավորություններից, մասնավորապես որ պայմանագիրը ստորագրելիս թուրքական պաշտոնական պատվիրակությունը չի գերազանցել իր իրավասությունները: 1969թ. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 18-րդ հոդվածը պայմանագիրը ստորագրող պետությունների վրա ստորագրումից մինչև վավերացում ընկած ժամանակամիջոցում որոշակի պարտավորություն է դնում ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են ազդել պայմանագրի առարկայի և նպատակի վրա⁴³: Սակայն թուրքական նոր իշխանությունները հետևողական քայլեր էին ձեռնարկում Սևրի պայմանագրի դրույթները չեզոքացնելու ուղղությամբ⁴⁴: Բացի այդ, պետք է արձանագրել, որ անգամ չվավերացված վիճակում Սևրի պայմանագրի դրույթները մասնակիորեն գործադրվեցին արաբական տարածքներն Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը նախատեսված էր Սևրի պայմանագրով և արդեն իսկ տեղի էր ունեցել հաջորդ՝ Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ⁴⁵:

Հատկանշական է, որ չվավերացված և իրավական ուժի մեջ չմտած Սևրի պայմանագրով նախատեսված հայերի գույքային իրավունքների վերականգնումն ամրագրող հոդվածները փաստացի վերահաստատվեցին 1923թ.-ի հուլիսի 24-ին Թուրքիայի կողմից ստորագրված, վավերացված և ներկայումս գործող Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներով: Այսպես՝ Լոզանի պայմանագրի 33-րդ հոդվածը գրեթե նույնությամբ կրկնում էր Սևրի պայմանագրի 285 և 288-րդ հոդվածների այն դրույթները, որ այլ քաղաքացիություն ընդունած նախկին թուրքահպատակները պահպանելու էին անշարժ գույքի նկատմամբ իրենց այն իրավունքները, որոնք ունեցել են մինչև քաղաքացիության փոփոխությունը, իսկ շարժական գույքն առանց որևէ արտահանման կամ ներմուծման տուրքերի կարող էին տանել իրենց հետ⁴⁶: Ի լրումն 33-րդ հոդվածի՝ նույն պայմանագրի 65 և 66-րդ հոդվածով սահմանվում էր, որ պետք է վերականգնվեն ոչ միայն Թուրքիայի, այլև նրանից անջատված տարածքներում մնացած բոլոր թուրքահպատակների իրավունքներն իրենց գույքերի նկատմամբ⁴⁷:

Այսպիսով՝ հայրենիքի մի մասի նկատմամբ տեղաբնիկ հայ ժողովրդի իրավունքը վերականգնող, Հայաստանին անմիջականորեն վերաբերող հոդվածներից բացի, Սևրի պայմանագրում տեղ են գտել ոչ պակաս կարևոր հոդվածներ, որոնցով կարգավորվում էին օսմանահպատակ ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում՝ հայերի խախտված

⁴² Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000. С. 184.

⁴³ Международное право в документах. Сост. сборника Н.Т. Блатова, М., 1982, С. 75.

⁴⁴ Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պեյրուպ, 1976, էջ 87:

⁴⁵ Նույն տեղում, էջ 132:

⁴⁶ Տե՛ս Treaty of Lausanne, <http://wwi.lib.byu.edu/index.php>

⁴⁷ Տե՛ս նույն տեղում:

իրավունքների վերականգնման ու հասցված նյութական վնասների հատուցման հարցերը, ինչպես նաև քրեական պատասխանատվություն երևախատեսվում թուրք բարձրաստիճան ու տեղական պաշտոնյաների նկատմամբ ոչ միայն պատերազմական հանցագործություններ կատարելու, այլև մարդկության դեմ կատարած հանցագործությունների, առաջին հերթին՝ հայերի զանգվածային բնաջնջումը ծրագրելու և իրագործելու համար: Նշված հոդվածների պատշաճ վերլուծությունը հնարավորություն կտա հստակեցնել հանցավոր թուրքական պետության կողմից Սևրի պայմանագրով ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև քննարկել տվյալ փաստաթղթում առաջարկվող ցեղասպանության հանցագործության զոհ դարձած տեղաբնիկ ժողովուրդների և առաջին հերթին հայերի խախտված իրավունքներն ու նյութական վնասները վերականգնելու մեխանիզմների իրագործման հնարավորություններն ու հեռանկարները:

TREATY OF SEVRES AS ONE OF THE LEGAL-POLITICAL BASIS OF REPARATIONS

ARMEN MARUKYAN

NAS RA Institute of History, Department of the Armenian Question and Armenian Genocide History, Head; YSU Professor, Armenian-Russian (Slavonic) University, Doctor of History, Professor, Yerevan, Republic of Armenia

The purpose of the article is to substantiate the approach that in addition to articles 88-93 directly related to Armenia, restoring the rights of the indigenous Armenian people to a part of their homeland, Western Armenia, the Treaty of Sevres also contains provisions that restore the violated rights of the Armenian population and provide for compensation for material damage caused, as well as equally important articles on bringing high-ranking and local Turkish officials to criminal responsibility for crimes against humanity, primarily for planning and carrying out the mass destruction of Armenians.

During the research both general symmetrical (analysis, synthesis, historical principle) and special (formal-logical, comparative) methods were applied.

The study concludes that although the Treaty of Sevres was not ratified, some of its provisions were partially implemented by the signatory states, and that the Treaty of Sevres was not replaced by the Treaty of Lausanne, since both the parties to these two documents and their subject matter, are not identical.

In Armenian historiography and socio-political thought, the Treaty of Sevres of August 10, 1920 was mainly discussed in the context of articles 88-93 directly related to Armenia. Meanwhile, in addition to these articles, the Peace Treaty of Sevres also contains a number of important articles on the restoration of violated rights of the non-Turkish population of the Ottoman Empire, including Armenians. Although the words "Armenia" or "Armenians" are omitted in articles 125, 142, 144, 285 and 288 of the Treaty of Sevres, it is clear that these articles are also directly related to the restoration of the violated rights of the Ottoman Armenians and their descendants.

According to articles 226, 228 and 230 of the Treaty, high-ranking Turkish officials were criminalized not only for committing war crimes, but also crimes against humanity, which primarily refers to the genocide committed against the Armenian population of the Ottoman Empire. A comprehensive analysis of these articles will make it possible to clarify the international obligations assumed by the criminal Turkish state under the Treaty of Sevres, as well as to discuss the possibilities and prospects for implementing the mechanisms proposed in the document for restoring violated rights and material damage caused to the Armenian population who were victims of the crime of genocide.

Key words: *Treaty of Sevres, Republic of Armenia, Western Armenia, The Armenian Genocide, Ottoman Empire, Provisional law "On Abandoned Property", Republic of Turkey, mixed mediation commissions, Treaty of Lausanne.*

**СЕВРСКИЙ ДОГОВОР КАК ОДНА ИЗ ПРАВОВЫХ
И ПОЛИТИЧЕСКИХ ОСНОВ РЕПАРАЦИЙ****АРМЕН МАРУКЯН**

*заведующий отделом Истории Армянского вопроса и
Геноцида армян Института истории НАН РА,
профессор ЕГУ и Армяно-Российского (Славянского) университета,
доктор исторических наук, профессор,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является обоснование такого подхода, по которому следует, что, помимо статей 88-93, непосредственно относящихся к Армении, которые восстанавливали права коренного армянского народа на часть ее родины – Западную Армению, в Севрском договоре содержатся положения, которые восстанавливают нарушенные права армянского населения и предусматривают компенсации за причиненный материальный ущерб, а также не менее важные статьи по привлечению к уголовной ответственности высокопоставленных местных турецких чиновников за преступления против человечества, в первую очередь, за планирование и осуществление массового уничтожения армян.

В ходе исследования использовались как общенаучные (анализ, синтез, принцип историзма), так и специальные (формально-логический, сравнительный) методы.

В исследовании сделан вывод о том, что, несмотря на то, что Севрский договор не был ратифицирован, некоторые из его положений были частично реализованы подписавшими его государствами и что Севрский договор не подменяет Лозаннский договор, поскольку и стороны этих двух документов, и их предмет нетождественны.

В армянской историографии и общественно-политической мысли Севрский договор от 10 августа 1920 года главным образом обсуждался в контексте статей 88-93, непосредственно относящихся к Армении. Между тем, помимо этих статей, Севрский мирный договор содержит также ряд важных статей о восстановлении нарушенных прав нетурецкого населения Османской империи, в том числе и армян. Хотя слова «Армения» или «армяне» в статьях 125, 142, 144, 285 и 288 Севрского договора отсутствуют, очевидно, что эти статьи имеют непосредственное отношение также к восстановлению нарушенных прав османских армян и их потомков.

Согласно статьям 226, 228 и 230 договора была предусмотрена уголовная ответственность в отношении высокопоставленных турецких чиновников не только за совершение военных преступлений, но и преступлений против человечества, под которыми в первую очередь, понимается геноцид, совершенный в отношении армянского населения Османской империи. Всесторонний анализ этих статей позволит уточнить международные обязательства, взятые на себя преступным турецким государством по Севрскому договору, а также обсудить возможности и перспективы реализации предложенных в документе механизмов восстановления нарушенных прав и материального ущерба, причиненного армянскому населению, ставшему жертвой преступления – геноцида.

Ключевые слова: *Севрский договор, Республика Армения, Западная Армения, Геноцид армян, Османская империя, временный закон «Об оставленном имуществе», Республика Турция, смешанные посреднические комиссии, Лозаннский договор.*